ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ Վայոց ձոր մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի թիվ 2 նիստի, կայացած 2023թ. հունվարի 16-ին ք. Եղեգնաձոր.

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի 6 անդամներից 6-ը, ինչպես նաև Վայք համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյանը, որը ըստ կարգի հանդիսանում է հանձնաժողովի անդամ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գրիգորյան / մարզպետ /
քարտուղար՝ Մ. Մեսրոպյան
անդամներ՝ Գ. Մարգարյան
Ա. Ղազարյան
Հ. Նազարյան
Է. Հովհաննիսյան
Մ. Մաթևոսյան

Հանձնաժողովը հաստատեց հետևյալ օրակարգը՝ Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի 2 /երկու/ միավոր քաղաքացու սեփականություն հանդիսացող 0.4հա /ծածկագիր 10-022-0317-0019/ և 0.26հա /ծածկագիր 10-022-0317-0018/ գյուղատնտեսական նշանակության վարելահողերը փոխադրել խոտհարքների չփոխելով հողակադաստրային գնահատման խմբերը:

Լսեցին- Հանձնաժողովի նախագահ Ա. Գրիգորյանը ներկայացրեց համայնքի ղեկավարի կողմից ներկայացված դիմումը:

Զեկուցողը նշեց՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի դիմումը և մեր հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները՝ վերը նշված հողատարածքները իրոք փաստացի խոտհարքներ են, ուստի տալիս ենք մեր դրական եզրակացությունը վերոնշված տարածքները, որոնք հանդիսանում է քաղաքացու սեփականությունները՝ դասել խոտհարքների շարքին:

Առաջարկվեց Վայք համայնքի ղեկավարին տալ դրական եզրակացություն համապատասխան որոշումը կայացնելու:

Հանձնաժողովը ելնելով վերոգրյալից՝

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Ղեկավարվելով ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ՝ թույլատրել Վայք համայնքի ղեկավարին կայացնել համապատասխան որոշում համայնքի 2 /երկու/ միավոր քաղաքացի Ստեփան Խաչատրյանի սեփականություն հանդիսացող 0.4հա / ծածկագիր 10-022-0317-0019 / և 0.26հա /ծածկագիր 10-022-0317-0018/ գյուղատնտեսական նշանակության վարելահողերը փոխադրել խոտհարքների, չփոխելով հողակադաստրային գնահատման խմբերը:

2. Հանձնաժողովի որոշման մեկական օրինակը տրամադրել՝ համայնքին:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Քարտուղար՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ